

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՔԻՄԻԱ

2024 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Հանրակրթության նոր չափորոշիչներին և ծրագրերին
համապատասխան)

Պատասխանատու՝ **ԳՅՈՒԼՆԱՐԱ ՓԱԼԻԿՅԱՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	4
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ.....	4
ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	4

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված են 2024 թ. Տավուշի մարզում ըստ փորձարկվող նոր ծրագրի կազմված «Քիմիա» առարկայի միասնական քննության թեստերի առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, կառուցվածքը:

2024 թ. միասնական քննության համար որպես հիմք են ընդունվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ մարտի 30-ի N43- Ն հրաման, «Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Քիմիա» առարկայի 7-9-րդ և 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ»-ը, Տավուշի մարզում փորձարկվող հիմնական և ավագ դպրոցների համար երաշխավորված քիմիայի նոր դասագրքերը, ուսուցողական նյութերը, լաբորատոր աշխատանքների ձեռնարկները, ինչպես նաև «Քիմիա» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարանները՝ համապատասխան փոփոխություններով:

Քննական թեստերը կազմվում են «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից և «Շտեմարանների» առաջադրանքների հիմքի վրա կազմված նոր առաջադրանքներից, ինչպես նաև լաբորատոր փորձերի վրա կազմված առաջադրանքներից:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Քիմիա» առարկայի միասնական քննական թեստը գնահատվում է 80 միավոր: Թեստում առաջադրանքները երեք կառուցվածքային տիպի են՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և «Պնդումների փունջ»:

Թեստում 50 միավոր է գնահատվում ընտրովի պատասխանով առաջադրանքները, որոնք ընդգրկում են քիմիայի նոր առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները և լաբորատոր աշխատանքները: 30 միավորը՝ կարճ պատասխանով առաջադրանքները և ենթաառաջադրանքները, որոնցից ***մեկը կարճ պատասխանով համապատասխանեցնելու առաջադրանք է, իսկ 2-ը՝ «Պնդումների փունջ» են, որոնք ընդգրկում են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները և լաբորատոր աշխատանքները, ըստ նոր ծրագրերի և չափորոշիչների:***

Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

Բուհ ընդունվելու համար միասնական քննության միավորը հաշվարկվում է 20 միավորանոց սանդղակով՝ հիմնվելով ամբողջ աշխատանքի կատարման արդյունքում դիմորդի հավաքած միավորների վրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Քիմիա» առարկայի միասնական քննական թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ուսումնական նոր չափորոշիչի և ծրագրերի, որը կազմվել է ըստ հետևյալ հիմնական հինգ գաղափարների՝

1. Նյութի մասնիկային բնույթ՝ ատոմ և մոլեկուլ
2. Քիմիական կապ, կառուցվածք և հատկություններ
3. Քիմիական ռեակցիաներ
4. Էներգիայի պահպանման օրենք և թերմոդինամիկա
5. Կինետիկա և հավասարակշռություն

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական սենյակում թույլատրվում է ունենալ՝

- քիմիական տարրերի պարբերական աղյուսակ
- աղերի լուծելիության աղյուսակ
- մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը
- հաշվիչ